ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 448-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 11.02.2022թ. թիվ 058-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի առաջատար մասնագետ Թ. Շառոյանի 04.05.2022թ. թիվ 2398 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 01 բաժնի 1 խմբի 1 դասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի համայնքապետարանի ծախսերի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» 4112 հոդվածի պլանը պակասեցնել 1500.0 հազար դրամով և ավելացնել «Ներկայացուցչական ծախսեր» 4237 հոդվածի պլանին, համայնքի հետ համագործակցող քույր-քաղաքների պատվիրակությունների հյուրասիրությունը կազմակերպելու համար:

2. Արմավիր համայնքի 2022թ.բյուջեի և ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2022 թ. Մայիսի 10
ք. Արմավիր